



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

91.99

Σ-30

467

468 - 6 NOV 2011

ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵԼԻՑՆԵՐ
454

Լ. ՉԱՆԹ

891.99
230

ԼԵՌԱՆ ԱՂԶԻԿԸ

1001
2947



Հաստատված
Ս Տ. Լ Ի Ս Ի Յ Ե Ա Ն Ի
Ե Ը Ն Կ.

13840

ԹԻՖԼԻՍ, 1904
Տպարան «ԵՐՄԷՍ», Մաղաթեան փող., 15.
(39)

1.3 JUL 2013

47364



ԱՌԱՋԻՆ ՆԻԱԳ

1

Լեռներ, սէգ լեռներ, ես կը սիրեմ ձեզ,
 Կը սիրեմ բուռն ու անզուսպ սիրով.
 Հըպարտ գագաթնիդ՝ հըսկաներ կարծես՝
 Ուժ կը ներշնչեն թարմութիւն, կորով:
 Հնոս ամեն մի բան սրտիս կը ժպտի,
 Թախիծն ու երկիւղ կը վանէ մէկդի.
 Հնոս զովիկ հով մը գէմս կը փութա,
 Եւ կուրծքս ազատ շունչ կ'առնէ կու տա.
 Իսկ անզընդախոր ձորի յատակին՝
 Երբ իր պատերը պատռել տըքնելով՝
 Ժայռերու գէմքին փըրփուր թըքնելով՝
 Կ'ուռի կ'ուլըրի ջուրը գետակին,
 Սիրտս ալ, գետին պէս, կը կայտոէ վէտվէս.
 Եսալ փըրփըրի կ'ուզեմ իրեն հետ:

Доз. ценз. Тифлисть, 3-го июня 1904 года

69350 - 68

Լեռներ, վեհ լեռներ, ձեզ երգել կ'ուզեմ
 Ոգևորութեան այս տենդերուս մէջ.
 Թող ձեր ճակատը միշտ բաց, միշտ վըսեմ
 Դառնա գործերսուս իդեալն անշէջ:
 Դո՛ւ, լեռան աղջիկ, երգել կ'ուզեմ քեզ
 Եւ թող երգիս հետ դուրս թափի կըրծքէս
 Հոն երկա՛ր ատեն ծածկըւած անյուշ
 Թըրթիւք սրտիս, յոյզերս անուշ:
 Եւ, երնէկ, երգս ալ պարզ ըլլա, յըստակ,
 Ինչպէս ամեն բան լեռներուն վրա.
 Ինչպէս աղբիւրը, որ դուրս կըծորա
 Մամռոտ ժայտերու զով խոտչին տակ,
 Ինչպէս լեռնային երկինքը վըճիտ,
 Ինչպէս, լեռան կոյս, թընդիւնը լանջիդ:

Խոր, ժայռոտ ձորի պատըռտած կողէն
 Պարզուկ գըմբէթ մը երկինք կը միտի.
 Սուր-սուր սըլաք մը լարւած աղեղէն,
 Որ, ըսես, հիմա վեր թըռչի պիտի:
 Վա՛րը՝ Ազատը ծեր ժայռի գըրկին՝
 Դէմ կուտա անոր մողեգոտ կըրքին,
 Եւ օձի մը պէս, որ կ'ելնէ բոյնէն,
 Շուտ դուրս կը սողա Գեղամ սարերէն.
 Բայց այդ խօլ, հապճեպ փախուստի ատեն
 Երբ կը հանդիպի այն սուրբ գըմբէթին՝

Պատկառած, ըզգուշ կը քաշւի մէկգին,
 Որ Գեղարդ վանքին տեղ տա իր տաշտէն.
 Բայց ի՛նչ... տեսած էք բնութեան ծոցին
 Պապերնուդ փառքը լըռիկ, առանձին...

Օ՛հ, որքան քաղցր է ձըմբան բանտէն վերջ՝
 Բնութեան գիրկը, խենթի պէս, նետուիլ.
 Ու խորհըրդաւոր, սիրուն ձորին մէջ
 Եւ ըսքանչանալ, և ոգևորելի:
 Տաք իրիկուն էր, երբ սայլն առաւ կանգ.
 Վերջին ոլոր մ'ալ, ու ձորը մտանք:
 Գետն իր խուլ երգով դէմերնիս փութաց,
 Պազաւ երեսնիս իր շընչովը թաց.
 Ճոխ ուռիներու թաւուտ ճիւղերէն
 Սուր դայլայլիկներ կըտորուկ, թըռթըռուն
 Յանկարծ անձրևեց մեր խոնջած գլխուն.
 Մինչ գաղտնի ձայներ, որ մարդ կը ծաղըրն,
 Ջորի այն բարձր անձաւներէն կոյս
 Նոյնը կը կըրկնէր թովւած ականջնուս:

Նըրբամէջ ձորը դիւթել կ'ուզէր մեզ՝
 Վառ ծաղիկներով պըճնած դէմքն ու լանջ.
 Փարթամ բնութեան իբրև նուրբ բեհեղ
 Նետեր էր ուռին կըրկնոց մը կանանչ.
 Սակայն վախնալով, որ հոգի անպատկառ

Ծածկոյթը մարմնէն կատակով բանար՝
անփոյթ գիրքով մը փաթթեք էք մէջքին՝
Փըրփուրէ գետի արծաթէ գօտին:

Եւ շացանք մենք այդ կոյս, ամօթխած,
Ու թարմ, գըրգըռիչ գեղեցկութենէն.

Մոռցանք զըպրօցը, իր ժխորն ամեն՝
Նոր հրապօյրին անձնատուր եղած:

Եւ հաճոյալից խուսափուկ օրեր

Մեր անվիշտ կեանքի օրոցքը կ'օրէր:

6

Սակայն հօտուն են, վաղանց, քըմածին
Ու գիւրափոփոխ իղձերը մարդուն.

Ինչպէս ամառան վառ վերջալոյսին

Նըրբին, գունագեղ ամպերը շարժուն:

Հազիւ էր անցեր ամիս մը ատեն,

Երբ սիրուն օր մը ըզգացինք արդէն

Որ հընչուն գետը ու ձորը գողարիկ

Ծարաւ սըրտերնուս ալ չէր գար հերիք.

Ազատ երկընքի կ'ըզգայինք պահանջ.

Ծերուկ սարերու տեսքը ալեհեր

Կարծես կը քաշէր մեզ լեռներն ի վեր՝

Հոն, ուր դաշտակն էր փըռած գեղալանջ:

Եւ մենք վըճօնցինք շարաթ մը-երկու

Լեռներու վըրս երթանք ապրելու:

6

7

Գիրք ու անկողին՝ պէտքերնիս բոլոր՝

Իր թիկունքն առաւ մի նիհար, սե եզ.

Դէ, օ պ ա *) կ'երթանք մենք ոլոր-մոլոր,

Մանուկ հօտաղ մը առաջնորդ է մեզ:

Դըժւար էր ճամբան, նեղ, սեպ ու անանց,

Շուտով գիշերն ալ հասաւ անթափանց.

Երբ յանկարծ... մօտէն խուլ որոտումներ

Դըզըրգեցուցին թէ անդունդ թէ լեռ.

Եւ հոժ ամպերու թանձրութեան խորէն

Դուրս սողաց շանթը ճայթումով վայրագ,

Մինչդեռ փայլակը դողդոջ ու արագ

Մահատիպ լոյս մը կը թափէր վերէն:

Իսկ մենք կ'եղնենք միշտ լուռ ու շընչարգել

Մութին մէջ կորած այդ շաւիղն անել:

8

Ա՛հ, այդ գիշերը ս'վ պիտի մոռնա.

Կատղած բնութեան ցասկէն դողահար՝

Միայնակ նետուած լեռներուն վըրա,

Երբ երկընքէն վար դըժոխք կը տեղար:

Չէ. ես կը պաշտեմ այդ ազմուկն անսանձ,

Այդ ակնախըտիդ փայլը կարճակեաց,

Այդ կայծակները, երբ վազքերնուն տակ

Կը պատուեն ամպերն այն կուտակ-կուտակ.

*) Այն լեռնագաղաքը, ուր հօտը կը գիշերէ և
ուր հովիւները վրան են զարկած:

7

Բնութեան անեղ այդ կըռուին հուժկու
ես կ'երկըրպագեմ յափշտակութեամբ.
Ան իմ թարմ սրտիս կու տա իղձ ու թափ
Մեր կարճ կեանքին մէջ անդուլ կըռուելու.
Եւ ես ուժ կ'զգամ այդ վեհ վայրկեանին
Ուխտեմ բիւր ցընորք ու անկարելին...

9

Բայց թունդ աղմուկին քիչ-քիչ յաջորդեց
Առատ անձրևի դարկերն ու շառաչ.
Եւ մենք ուժասպառ, գաւազաննուս յեց՝
Եզին հետքովը կը դիմենք առաջ:
«Հասանք» կ'աւետէ մեզ առաջնորդնիս.
Ես ըսթափելով կը նայիմ չորս դիս:
Մութին մէջ բան մը հազիւ նըշմարած՝
Այն կողմ կը վազենք եզը զանց ըրած.
Բայց յաղթ, հովական խոշոր շներու
Հաչն ու կլանչը մեզ ետ կը վանեն.
Մինչ հովիւները կ'երնեն վըրանէն
Ապշած նայելով անկոչ հիւրերուն,
Որ գոռ փոթորկին, այդ սև դիշերին
Իրենց այցի գալ մըտածեր էին:

10

Դեռ փոթորիկը դուրսը կ'աղմըկէ,
Եւ յորդ անձրևն ալ կը ծեծէ անդուլ
Պարզուկ վըրանին ծածկը թաղիքէ՝
Կազմելով երգ մը միակերպ ու խուլ:

8


Ու այդ թացութեան երգը տըխրագին
Օրօր կը կարգա մեր յոգնած մըտքին.
Եւ մենք ուժաթափ, մըրսած ու քընատ,
Անձրևէն թըրջած ու հովէն գունատ՝
Կը նընջենք խորունկ մանկական քընով:
Քունն ինչ անուշ է լեռներուն վըրա,
Երբ փոթորիկն ալ գուրսը կը գոռա,
Երբ խեղճ վըրանըդ կը դողա անով,
Եւ անկողնիդ մէջ երբ բընագդաբար
Կըծիկ կը դառնաս տաքնալու համար:

ԵՐԿՐՈՐԿ ՆԻԱԿ

1

Պայծառ արև էր, երբ աչքըս բացի,
Ընկերներըս խոր կը նընջէին դեռ.
Վըրանին առջև երկու արծալ ձի
Ցողաթուրմ խտտը խորթով կ'ուտէր:
Հըսկա ծերուկ մը երկու քայլ անդին
Նըստեր կը խորէր ձեռքը ծընօտին:
Դուրսէն բիւր ձայներ, ճըռուողուն, դայլայլ
Եւ սուր բըղզիւն մը անվերջ, անայլայլ
Համանըւագ մը կը դաշնակէին:
Ես չըդիմացա. ցատկեցի տեղէս.
Աղբիւրն հարցուցի ծերուկ տանտերէս.
Ան քանի մը բառ պոռաց անմեկին
Ու աղջիկ մը ներս վազեց կարմըրած,
«Գրնա ետե՛ն» ծերք մըրմըռաց:

9



Ի՞նչ սիրուն օր էր, ի՞նչ կապոյտ եթեր.
Շուրջըս շող ու ցօղ, թարմութիւն ու զով-
Հոն բնութիւնը կարծես լրացուցի՜ր՝
Զորքըւի կ'ուզէր գեփիւտի շքնչով:
Ես կը քալէի արբշիւ ու արագ՝
Լեռան ջինջ օղբ ծըծելով անյագ:
Աղջիկը թեթև առջևէս կ'երթար
Մանրիկ, ոստոտուն քայլածքով կայտառ:
Ա՛, իր նուրբ, ճկուն մէջքը կանացի.
Եւ թիկունքէն վար սև գիսակը ճոխ՝
Օձի պէս սողուն ու աչքի կառչող:
Զո՛ւր հետը խօսիլ հեղ մը ջանացի.
Գլուխը հակեց շարժումով մը վէս,
Յընցում մը ըրաւ, թըռաւ առջևէս:

Եւ ես խելայեղ ինկա ետևէն,
Կարծես զըրզըռած իր վագրէն յամառ.
Հասա ու ամուր բըռնեցի թևէն՝
Առանց գիտնալու, թէ ինչու համար:
Անոր արևոտ այտերը սիրուն
Հագիւ էր պագեր տանընդինգ գարուն.
Եւ ի՞նչ թարմ մարմին, և ի՞նչ հրապոյր,
Ինչպէս նըրբակաղմ, ինչպէս կենսաբոյր:
Ես պահ մը անթարթ նայեցա իրեն,
Մինչ ինքն ամըչկոտ հայեաց մը անուժ

Յառեց աչքերուս վարանքով անուշ:
«Անունըդ» ըսի. ժրպտեցաւ նորէն,
Եւ յանկարծ խըլեց թևը ձեռքերէս
Ու փախաւ լեռան երէի մը պէս:

Անհետ եղաւ ան ժայռերուն ետև,
Իսկ ես միայնակ մընացի շրւար.
Կըքծքիս տակ բան մը կը ճըմլէր թեթև,
Անկանոն շունչըս արագ կը հևար.
Ու սիրտըս ամուր մուրճի մը նման,
Զարկ կու տար պլինդ-պլինդ. կատաղեր էր ան:
Անշուշտ մոլեգնոտ ու ըշտապ վագրէս
Այսպէս շքնչասպառ, յուզւած էի ես.
Մտքիս մէկ խորշէն կ'ըսէին սակայն
Որ այդ բնական պատճառէն տարբեր
Ուրիշ նոր բան մը հոգիս էր թափեր,
Նոր բան մը ճըմլող, թարմ ու գիւրբեկան...
Մինչև որ թուլցան գարկերը սըրտիս
Ու ես հոգեգմայլ նայեցա չորս դիս:

Նոր էր ամեն բան հոն ինձի համար.
Այդ չըքնաղ, վայրի բընութիւնն ազդու,
Այդ շուրջանակի լեռներն անհամար,
Որոնք թև թևի յենած իրարու

Ըսկըսիլ կ'ուզեն շուրջ-պար մը հըսկա,
Որ համբատատան կ'երթա ու կուգա.
Մեր նեղ, ցից սարը, որ դաշտինդ իմաց
Բեմ մը կը կարծես կանանչով գորգած.
Դիւցազնի բեմ մը, որուն բարձունքէն
Ամեն առաւօտ վարդ արշալոյսին
Բիւրաւոր զըւարթ ձայներ միասին
Բնութեան գեղը կը ճառեն կ'երգեն:
Է՛հ, ես քանի հեղ յոյգերով ետուն
Ներկա եմ եղեր այդ ներբողներուն:

6

Ու այդ թարմ, վայրի բընութեան նըման,
Նոր էր ու բուռն վարած կեանքերնիս.
Անցեալի՛ յուշեր, եկէք օգնութեան,
Երգենք միասին ինչ քաղցր էր սըբախ:
Երբ արշալոյսը գաղտուկ ժպտալէն՝
Լեռան ու երկնի համբոյրի վայրէն
Ցոյց տար դալկահար, քընստ աստղերուն
Քունէն կարմըրած այտերը սիրուն,
Երբ Արագածի չորս-ձիւղ գագաթին
Թուխ-թուխ ամպերը խորունկ յորանջով
Ճերմակ մահիճնուն ելնէին նազով.
Եւ երբ արթըննար օդը հանդարտին
Թռչուններու սուր առաջին եթզէն,
Մենք ալ երգելով կ'ոսանէինք քունէն:

7

Մեր ուրախ, տենչոտ բարձըր երգերուն
Աղբիւրն իր հեղիկ ձայնը կը խառնէր,
Մինչ իր սառնորակ հոսանքը ծիծղուն,
Քրնի համբոյրը այտէս վար կ'առնէր:
Հեռուն լեռներէն հըտպիտն արձագանգ
Ճըշտիւ կը կըրկնէր իւրաքանչիւր վանկ:
Մենք, արբած լեռան մաքուր, գաղջ օգէն
Հողի ու ծաղկի գըրգըռիչ հոտէն,
Շարժելու տենչ մը կ'ըզգայինք յանկարծ:
Դէ, շիտակ այն սեպ, ժայռոտ բըլրէն վեր-
Ետենուս հող, քար վար կը գըլտորէր
Սուլ թընդիւնով մը, թափով մը անդարձ,
Մինչ խումբը հևքով շեշտ առաջ կ'երթար
Գագաթը միայն առնելու դադար:

8

Ապա կ'երթայինք ու ջոկին մէջէն
Շուտ կը թամբէինք մեր նախընտրած ձին.
Եւ դալարագեղ լեռան թեք լանջէն
Ձին ճամբա կ'իւնէր միշտ հըլու սանձին:
Ա՛խ, երբ ան կատղած, բերնին յորդ փրփուր,
Ճոխ բաշը հովին, աչքերուն մէջ հուր,
Շոգի ժայթքելով շեշտ կը սըլանար
Ոտքերն ու կուրծքը գետնին հաւասար,
Կ'արթըննար մէջըս վայրի բընազգներ.
Կ'ուզէի բան մը, որ փըշքեմ ջարդեմ,

Կ'ուզէի կըռւիմ սուրող հովին դէմ,
Որ աղանջիս տակ ծաղրըս կը հանէր...
Այն պահուն ձիէս, չէ, տարբեր չէի,
Ե՛ս ալ, իրեն պէս, կը վըրընջէի:

9

Կամ իրիկունը, երբ թոյլ ցուքերով
Արևը երկրիս հըրածեշտ կու տար,
Եւ երբ լեռները իրենց ըսաւերով
Պինդ կը փաթթէին հովիտը դալար.
Երբ հովիւները փըչելով շըւին՝
Դէպի վըրանը ետ կը քըշէին
Մայող, բառաչող հօտերն ու տաւար,
Մենք՝ թըմըութիւննիս վանելու համար՝
Դէպի վըտակը կ'երթայինք ըշտապ.
Լեռան ցատկըստող ջուրերը յըստակ
Ա՛լ կը փըրփըրէր մեր զարկերուն տակ.
Մինչ մենք դեռ երկար, թէև ուժաթափ,
Իր հոսանքին դէմ կու տայինք պայքար,
Որ կարկաչելով վըրանիս կու գար:

10

Վըտակին մօտիկ ժայռ մը կա ցըցւած,
Որուն դէմ հովը իզուր կ'ըսպառնա.
Մենք լողալէ վերջ՝ զով ու թարմացած
Հնդ կը ժողվըւինք՝ այդ ժայռին վըրա:

14

Ճիշտ մեր ձախ կողմէն Մասիսն ամենի
Լեռան մը ուսէն շեշտ մեզ կը նայի.
Աջէն Արագած՝ հակած Արային՝
Ո՛վ գիտէ, ինչեր կը պատմէ հին-հին...
Այրարատ դաշտը կը փըռուի մեր դէմ
Որ պինդ պարուրւած իր գորշ ծածկոցով
Քուն մտնել կ'ուզէ. ի՛նչ սըշուշի ծով.
Ետիս ալ ձորի մութն է ձառագէմ,
Ուր Ազատ քարէ խանձարուրին մէջ
Կը կըռուի անգուլ իր կըռիւն անվերջ:

11

Եւ մենք անձնատուր մեզ շըրջապատող
Դարերու վըկա այդ արձանններուն,
Կը խորհիք անխօս, յուզւած, սրտադող՝
Մութին մէջ զամած աչքերնիս հեռուն:
Հին, յոգնած դարեր, ծեր ուղտերու պէս,
Կու գան ու դանդաղ կ'անցնին առջևէս:
Բայց, տեսար, վէճ մը մեր մէջ կը փըրթի՛,
Անմիտ յորդում մը տենչայոյզ սըրտի.
Գալիք օրերու քօղը կը պատուի
Մեր անփորձ մըտքի յանգուզըն ճիգէն.
Ի՛նչ պատկեր, ի՛նչ կեանք կը ժպտի տակէն...
Եւ ա՛լ՝ վարդերանդ յոյսերու գերի՝
Պինդ-պինդ կըհաւտանք, ս՛րբը հպարտութիւն
Թէ պիտի չանցնի մեր կեանքն ապարդիւն:

15

Այս կեանքը սըրտիս նոր էր ճշմարիտ,
 Նոր իր լեռնական պարզութեամբը վեհ,
 Նոր իր ինքնաբուզիս յոյզերովն անմիտ,
 Նոր իր գեղովը, որ մարդ կը թովէ:
 Նաև հոն մեզի նոր էր ծերունին,
 Որ անշարժ նըստած կը խորհէր ինքնին
 Աշխոյժ տարիքին իր ուժն ու գործեր,
 Եւ կռիւները, որ ան վարած էր
 Քաջ թըշնամուն դէմ երես առ երես.
 «Չէ, ան ատենը ուրիշ էր աշխարհ»,
 Ու խոր թախիծէն ծերը կը դողար:
 Է՛հ ինձի համար նոր էր վերջապէս
 Այն լեռան վարդը՝ վայրի ու չքնաղ
 Իր աղքատ, պարզուկ ձորձերուն մէջն ալ:

Բայց քիչ-քիչ վարժիլ ըսկանք արդէն
 Վըսեմ բընութեան գոյն ու ձեւերուն.
 Կապոյտը երկնի, կանանչը դաշտէն,
 Ոսկի դեղինը ամեն իրիկուն
 Եւ արշալոյսի երկինքը բոսոր
 Մորթր աչքերնու ալ չէր անսովոր:
 Դեռ չորս հեղ արև գըլխունու չանցած
 Հոն մեզ անձանթ տեղ չէր մնացած:

Կաթէ շըրվէժը պաղ, փըրփըրադէզ,
 Դաշտակի ծայրի գոս ժայռը խոփոռ,
 Հարեան բըլրի գըլուխը խոշոր,
 Նոյն իսկ մամուպատ քարերը դէզ-դէզ,
 Որ մտերմօրէն վար կը նայէին,
 Ա՛հ, սրբան, սրբան սըրտիս մօտ էին:

Հովւի վըրանն ալ արդէն օտար չէր,
 Կարծես հին ծանօթ էինք մենք իրար.
 Լեռան աղջիկը ալ դուրս չէր փախչէր
 Ու մեր հարցերուն պատասխան կու տար:
 Երբ իր ամըչկոտ ձայնը երերուն
 Գար երազանքիս հիւսէր թելերուն՝
 Կը դիտէի ես գորովով անանց
 Իր մութ աչքերուն խաւարն անթափանց,
 Իր խիտ յօնքերուն կամարը կըրկին,
 Որ մացառներ են կարծես ձորափէն
 Ու ձորի վըրա ըսուեր կը թափեն.
 Եւ թուխ այտերը, որ կը բըւրնկին,
 Եւ վարդ շըրթունքին գոյգ թերթերը թաց,
 Ուր չար համբոյր մը կար միշտ պահւրտած:

Ա՛հ, այն ատենը տանըութ տարեան
 Բոց մը կը շըրջէր երակներու մէջ.
 Դեռ ամբողջ կեանքս էր սպասում միայն,
 Ու էութիւնըս երազանք ու անէջ:

1001
 7462



Եւ երբ պատահէր որ թըռչնակն անմեղ
Թափէր ծառերէն սիրայորդ գեղգեղ,
Ընկերուհիին շուրջը յածեւով
Ոստոտէր, երգէր իր սէրն ու գորով,
Ես կրժքիս խորը՝ նախանձէն ուռած՝
Կ'ըզգայի բուռնն ու յուզիչ իղձեր.
Հովը ականջիս լոկ սէր կը հըծծէր.
Եւ ես լալու չափ յուզւած, գըրգըւած
Կ'ուզէի սիրւիմ, կ'ուզէի սիրեմ
Ու թըռչնակին պէս, ոստոտեմ երգեմ:

5

Կ'ըզգայի սիրտըս լի էր ու գեղուն՝
Լի յորդելու չափ իր շրթունքներէն,
Ինչպէս անապակ գինին փըրփըրուն,
Որ դուրս կը թափի իր ներքին եռէն:
Ու գանգիս տենդոտ անուրջներուն մէջ
Սիրու պատկերներ կու գային անվերջ.
Պատկերներ օղէ, պատիր, մանկական,
Բայց անրիծ, անգինն ու իղէական:
Այդ անուրջները հոգիս կ'օրէին,
Երբ բախտըս ինձի գլորեց շիտակ
Լեռան աղջըկան պարզ վըրսնին տակ.
Ա՛յ, այդ աղջիկը՝ քընքուշ լեռնուհին՝
Որ ինչպէս իր սեպ սարերն հարազատ,
Պարզ էր, գեղանի, խըրոխտ ու ազատ:

Ու կը մընայի ես յաճախ մինակ
Լեռներու դըստեր հըրապոյրին քով.
Լճու կը նստէի հին վըրսնին սակ
Ընթերցանութեան նուրբ պատըրւակով:
Բայց ինչ ընթերցում. ո՞վ է այն տըղան,
Որ լուրջ ըզբաղի, երբ բոց կը տեղան
Զոյգ մը կանացի աչքեր հմայիչ
Ու հայեացքը վեր կը քաշեն քիչ-քիչ:
«Լիր արբան» ծոնկիս կը նիրհէր անուշ.
Անտարբեր ձեռքով ես հազիւ երբէք
Սուտ կը շըրջէի թերթերը մէկ-մէկ:
Զէ. կը կարգայի ժողված խելքս ու ուշ,
Բայց ոչ խեղճ գըրքիս տողերն անկենդան,
Այլ սև, կախարդիչ աչքերն աղջըկան:

7

Եւ ինքը կ'ըզգար, կը շիկնէր յանկարծ,
Վրանէն կ'երնէր, կը դառնար նորէն,
Եւ իմ հալածող հայացքէս գերւած՝
Ժըպիտ կը թափէր նուրբ շըրթունքներէն:
Մերթ ալ նըստելով իր աշխատանքին
Մեր սև վրանի լայն մուտքի կողքին՝
Երգ մը կ'ըսկըսէր, ձիգ երգ մը սարի,
Ինքն ալ իր երգն ալ շիտակ ու վայրի:
Իր անուշ ձայնը մերթ խիստ կ'որոտար,
Ինչ լեռան վայրագ, փոթորկոտ հովեր,

Մերթ կը թըրթըռար հնչուն ու երեր,
Ըսես, զեփուռը ձորէն ձայն կու տար.
Յանկարծ կը ժայթքէր, ջըրվէժ մը կարծես,
Մէկ ալ կը մարէր, վերջալոյսին պէս:

8

Նիւթն ալ, երգին պէս, բիրտ էր ու մաղձոտ.
«Բուռն ջերմ սիրով կը սիրէ Մարօն
Գըրացի լեռան ամենէն սըրտոտ,
Ամենէն սիրուն տղան մըրայօն.
Բայց այդ սուրբ սէրը պէտք է խոր պահել.
Երկու ցեղերն են իրար թշնամի...
Մարօն չըզիտէ. դեռ լուսարացին
Անգըլուխ դի մը գետէն հանեցին
Հօտի պահապան գամբըռներն հուժկու:
Վարձկան հովիւը չըճանչցաւ այդ դին,
Մարօյի հայրը ճանչցաւ իր որդին.
Եւ կատգած երգում կերաւ ահարկու,
Թէ պիտի լըւա բազկովը կըթոտ
Իր հարազատին վատ մահն ու ամօթ:

9

Դեռ իր աչքերը ուժ ունին այնքան,
Որ իր վրէժի նըշանը գտնեն.
Ու ծեր ձեռքերը պիտի չդողան,
Երբ հրացանի բըլթակը քաշեն:
Նա. ժայռի տակէն գընդակը թըռաւ,
Այն ինչ կտրիչ էր, որ թաւալ ինկաւ:

Ետ կու գա ծերը խէթ, դաժան ու քէն,
Մըիւնոտ բան մը կախած է ձեռքէն:
Մարօն հօրը դէմ կը վազէ արագ՝
Գէշ բնազդով մը սիրտը թունդ ելած,
Եւ սարսափահար կ'անգ կ'անէ յանկարծ
Դէմքը մահատիպ, աչքերը վայրագ:
Մազերէն կախած հօրը ձեռքէն ցած
Իր սիրեկանի դէմքն է ճանչցած»:

10

Այսպէս կ'երգեր ան նըստած քովընդի.
Գողարիկ գլուխը ցընցելով աշխուժ,
Ու ճակտին տակէն նայւած մը գաղտնի
Դէպ իմ անկիւնըս նետելով ըզգուշ:
Դիւթելու իղձը ան սէր էր ուսեր.
Եւ ինչո՞ւ գերել, գըրաւել կ'ուզէ:
Բայց սէրկէ ուսան աստղերը խայտալ,
Մեզի աչք ընել, պըչըիլ ու խընդալ.
Ո՞ւրկէ սովբեցաւ գետակը զըւարթ
Փըրփուրէ քող մը ձըգել իր վրա,
Ան ինչո՞ւ կ'ետա, ինչո՞ւ կը գոռա,
Ինչո՞ւ կը քըճնի փեբոուն հրպարտ.
Ծիածանն ինչո՞ւ կամար կը կապէ,
Երբ երկինք գոհար ու շող կը թափէ:

11

Մենք իրարու հետ քիչ կը խօսէինք.
Հարց մը կամ կատակ, միշտ ալ ժպտերես.

Մերթ ցոյց կու տայի ես մէկիկ-մէկիկ
Քանի մը սիրուն պատկեր գրքերէս:
Ու ձօտը նըստած ծունկըս իր ծունկին՝
Լի հեշտանքով մը անուշ, անմեկին՝
Պատկերին միտքը կը բացատրէի,
Ա՛, ես այդ պահուն բանաստեղծ էի:
Ան դեմքէս կախւած՝ կ'ունկընդէր անձայն.
Ու գոհ, միամիտ ժրպիտ մը յանկարծ
Կ'եղնէր շրթունքին, կարծես, իբրև վարձ
Իմ այդ սըրտագին ոգևորութեան:
Եւ այդ ժպիտն էր քընքուշ ու գոհար,
Որ խօսքիս նոր ուժ ու հումօր կու տար:

12

Եւ քիչ-քիչ ըզգալ ըսկըսա շուտով,
Որ իմ գերութեան չըվարժած հոգիս
Արդէն կապւած էր ամուր շըղթայով:
Բայց կապանք մը որ՝ թև կու տար կեանքիս:
Նոր բան մը կ'աճէր սըրտիս մէջ արագ՝
Տաք ու թրթռուն յուզում մը անյագ
Եւ խուժ ալիք մը կեանք ի խորունկէն
Ըզգացումներըս զըրկած էր ամեն:
Ու հարց կու տայի վարանքով համակ
Թէ արդեօք աս էր, որ կ'անւանեն սէր,
Որուն խեղճ սիրտըս անժուժ կ'ըսպասէր,
Որով գինոջնալ կ'ըղձայի անյագ:
Հարցիս պատասխան ուղեղըս չէր տար,
Միայն ալ ուժգին սիրտըս կը թընդար:

22

13

Ու կը հոսէին օրերը զըւարթ
Գոհար յոյզերով ու ոսկի կեանքով.
Մինչդեռ լեռնային ընութիւնն հըպարտ
Կը գըզէր մեզի խանդաղատանքով:
Է՛հ, թող չըմոռնամ այն օրերն անդարձ,
Երբ պատանեկան սիրտըս կեանք առած
Բնութեան, սիրու ծոցին մէջ անհուն՝
Պալիք կեանքի մը յոյսերով զեղուն՝
Կը թափահարէր լանջիս տակ ուռած.
Երբ գործ տեսնելու անյագուրդ տենչէս
Բիւր նըպատակներ կ'ըստեղծէի ես.
Երբ այս յոյզերուս ըովին մէջ զըտւած՝
Սոսկալի անէձք կու տայի իմ դէմ,
Սուրբ իղէալըս թէ երբէք դաւեմ:

ԶՈՐՐՈՐԻ ՆԻԱԳ

1

Է՛հ, այդ օրերը շատ արագ անցան
Ժիր, պատանեկան կեանքիս վըրայէն.
Ինչպէս ամպերուն մէջէն ցիրուցան
Կ'անցնի ասուպը գէմքիդ ժըպտալէն:
Ու միայն յուշեր անուշ ու քընքուշ
Կըձքիս խորքերը ծածկած եմ ըզուշ.
Ճիշտ սյդպէս տըղան կը պահէ իր քով
Իր հարի ընծան անհուն զըզւանքով:

23

Ուր է Գեղարդը իր լեռներուն հետ
եւ սւր իմ արդի անկիւնս անկինդան.
Բայց միշտ, երբ գըրչէս յանդերը խոյս տան
Ու խոնջ հայեացքըս՝ կարօտով յաւէտ՝
Արդի հարեան լեռներուն գամէի,
Ես ձեզ կը խորհիմ, լեռներ հայրենի...

2

Վայրկեանի մը պէս, թուր էր արդէն
Երկու շաբաթեան միջոցը սիրուն.
Եւ վըճուրէցաւ որ երկու օրէն
Տանք հըրաժեշտիս այդ պերճ լեռներուն:
Մեկնելու վըրա ես չէի խորհեր,
Ուրիշ նոր հարց մը մի միտքըս կ'օրէր.
Արդեօք աղջիկն ալ կ'ըմպէր սիրտը դող
Այս արբեցընող յուզումէս յորդող:
Ժըպիտն էր դիւթիչ, բայց միշտ անթափանց,
Աչքերն ալ մութ-մութ, վար քաշող ու խոր
Ինչպէս անյատակ անդունդն անաւոր,
Ուր միայն խելքըդ կը դառնա անսանձ:
Եւ այս անորոշ ծըփումս ու յոյսեր
Ալ կը հըրահրէր թէ հուրքըս թէ սէր:

3

Ձէ. չէի կրնար հանդուրժեր ընաւ,
Որ սէզ լեռնուէին մընար անտարբեր.
Պահանջոտ էի, գուցէ անիրաւ,
Բայց հըպարտ հոգիս մերժում չէր տաներ.

Ի՞նչ. նըրում կ'ուտեմ, որ այդ աղջըկան
Քունը խըռովող ես էի միայն.
Բայց այդ հերիք չէր. և պատրաստ էի
Կեանքիս օրերէն փունջ մը փետտէի,
Միայն անպատճառ խըլէի բերնէն,
Թէ իր միամիտ, անբիծ, կոյս սըրաին
Իս նայաձքներըս յոյզեր կ'աղդէին՝
Յոյզեր անձանօթ՝ որ կեանք կը բերեն,
Թէ երբ ծունկ ծունկի մինակ մընայինք՝
Անճառ հեշտանք մը, դող մը կ'ըզգար ինք...

4

Վերջին օրն էր ան, վերջին իրիկուն.
Աղբիւրին վըրա ժայռի մը յենած՝
Նըստեր էի ես տըրտում ու նըկուն
Մասիսի խօսուն ակնարկին դիմաց:
Մօր գիրկը վազող գունդը ոսկեհեր
Իր մարող լոյսի ցոլքերով երեր
Կը թափէր գոհար, մարգըրիտ անգին,
Մասիսի ծերուկ, ալեզարդ գանգին:
Արեւուտքն ամբողջ արիւն էր կըտրած,
Ուր կը լողային դեղնորակ բոցեր.
Յոգնած արեւ դէմքը կը գոցէր.
Ես կը դիտէի մըտացիք, կոտորած
Բնութեան պայծառ երանգներն այն պերճ,
Որ աչքերուս դէմ կը փոխէր անվերջ:

5

Յանկարծ մօտիկէն շըրշիւն մը թեթև,
Չըզիտեմ ինչու կը յուզուի հոգիս.

Աշխուժ շարժումով կը դառնամ ետե
 Ու ջերմ ժըպիտ մը կը ծըլի դէմքիս:
 Ճանչցած էի ես քայլերը կոյսին.
 Աղբիւրը կու գար հին կուժ մը ուսին:
 Ես կ'ըսպասէի լարումով անհուն,
 Մինչև ան կուժը լեցուց, ու խոհուն
 Թեք տըւաւ զգուշ լեզ կապած քարին,
 Ու, այծեամի պէս, ճարպիկ ու արագ
 Դէպի այն ժայռը նետուեցաւ շիտակ,
 Ուր նըստած էի անշարժ ու լըռին:
 Ու նազանքով մը անմեղ ու գողտրիկ
 ժըպտեցաւ դէմքիս, նըստեցաւ մօտիկ:

Կամաց մը վրաս ծըռելով քովէս
 Բաց մոռցած գիրքըս ըսկսաւ թերթել,
 Լացող ուռննու թարմ ոստերուն պէս՝
 Գիրկըս թափեցան վարսերը թել-թել:
 Աչքերուս դիմաց կ'եռար խոովքով
 Կէս մը ըսքօղւած կուրծքը կրծքիս քով:
 Ու կը խօսէինք, բայց ի՞նչ՝ չըզիտեմ.
 Է՛հ, ի՞նչ կը խօսին նստած իրար դէմ
 Զոյգ աղբիւրները անվերջ կարկաչով.
 Միայն կ'ըզգայի, որ շունչըս նորէն
 Ետ կու գար անոր մազերուն խորէն
 Ու շըրթունքներըս կ'այրէր իր տենչով...
 Զըզիտեմ ի՞նչպէս՝ յանկարծ ծըռեցա,
 Տեսնողս շըրթունքով այտին յարեցա:

Յընցում մը ըրաւ, և ուրիշ ոչինչ.
 Դէմքին վըրայէն կայծակի նման
 Սահեր էր անցեր համբոյրըս կիզիչ.
 Կարծես հըմայեր, քարացեր էր ան:
 Իսկ ես խելայեղ, ու բնագոթէն,
 Իսպառ բորբոքւած վայելքի հուրէն,
 Ուզեցի մէջքը շըղթայեմ ամուր
 Զոյգ բազուկներուս շըղթայովը կուռ.
 Բայց ան դիւրաթեք, ճըկուն օձի պէս,
 Թեկերուս մէջէն դուրս սողաց յանկարծ.
 Կէս մը բարկացոտ, կէս մը սիրարծարծ
 Թախծոտ հայեաց մը սահեցուց դէմքէս՝
 Անհետ ըլլալով ժայռերուն ետին.
 Ապուշ անձկութեամբ նետուեցա գետին...,

ՀԻՆԳԵՐՈՐԻՒՆԻԱԳ

Վըրանին մութը կուրծքըս կը ճընշէր,
 Եւ հուր կը շընչէր բարձը այտերուս.
 Կ'այրէի. տոկալ՝ ալ կարելի չէր.
 Ցատկեցի տեղէս ու վըրանէն դժբա:
 Ու կը շըրջէի քայլերով մտլոր.
 Առջևս հօտը փըռւած էր բոլոր.
 Ոչխարներն անհող մտեր էին քուն
 Խոնամ իրարու՝ պառկած ու կանգուն:

Եւ յանկարծ մէկը խորունկ շունչ կ'առնէր՝
Խուլ հառաչանք մը, որ դուրս կը պոսթկար
Վըշտոտ, ճընշըւած կուրծքէ մը տկար:
Հօտի չորս կողմն ալ հըսկա զամբըռնէր
Միշտ իրենց պարտքին պատրաստ, աչալուրջ՝
Նըստած էին լուռ, միշտ արթնն միշտ լուրջ:

2

Հեռուն ձայն չըլիւ՛. անշըշո՛ւնջ, հանդանրտ:
Հոն մեկամաղձոտ պայծառ լուսնին տակ
Վեհ Արագածի տխուր, ալեգարդ
Մտածկոտ դէմքը կ'երևա յըստակ:
Դեռատի լեռներ ծերուկ սարին քով,
Մարդկային ձեեր առած կատակով,
Հազիւ պահւըտած կէս ըստեբին մէջ՝
Իրար են գրկեր գգւանքով մ'անվերջ:
Մինչ հովտին թանձրը մըթութեան մէջէն
Բիրտ, անըըջային դէմքեր այլանդակ՝
Միշտ փոփոխելով հազար ձեի տակ՝
Իրար կը հըրեն, իրար կը կանչեն
Ու նախանձարեկ կը ծաղրեն հըսպիդ
Ջահիլ լեռներուն սէըը միամիտ:

3

Բայց մէկէն դադրեց հոգիս դիտելէն.
Ու խոր յուզուածով մըտարեբեցի

Աղջըկան վերջին նայւածքը նորէն
Որ կարծես ընդմիշտ յառած էր ինծի:
Եւ ըզգացի որ մանուկ էի դեռ.
Մինչ գիտէ՞ք կոյսին արժանին հի էր.
Ոչ թէ ինծի պէս երագուն տղա,
Այլ լեռընցի մը, ուրկէ կը դողա
Երէն անտառէն, արջը խոր ձորէն,
Որ կէս գիշերին ցգըլուխ զինւած՝
Հովի պէս թեթև նըժոյգը սանձած՝
Կու գա՛ սիրուհին կ'առնէ վըրանէն
Ու կըրծքին սեղմած կը տանի հեռուն.
Եւ մարդոց աչքին իր կինն է առտուն:

4

Այդ նըւաստութեան ըզգացումն անեղ
Ըսկաւ սիրտըս որդի պէս կըրծել.
Է՛հ, չընչին մարդու տեղը չէր այնտեղ,
Հոն ուժ, գո՛րծ պէտք էր, և ոչ երագել:
Բայց մերթ ալ ինծի այնպէս կը թըւէր,
Թէ այդ նայւածքը սէրն էր կարեվէր.
Այդպէս կը նայի եղնիկն անկասկած
Որսորդի նետէն վիրաւոր ինկած:
Այդ նայւածքը լուռ, կարծես, կ'աղաչէր,
Որ չըխաղայի իր հետ այդ քընքուշ,
Բայց վըտանգաւոր կատակն անըզուշ.
Եւ արդեօք իրաւ այդ կատակ մը չէ՞ր.
Տօղի կատակ մը վարդի վառ կըրծքին,
Որ շուտ կը ցընդի արևածագին:

Այդ նայածքը, ահ, ինձմէ գութ կ'ուզէր.
 Գըթալ իր անհոգ անդորըր կեանքին
 Ու չընեըընչեկ ապարդիւն յոյզեր,
 Որոնք ծաղկէ գուրկ լոկ փուշ կը ծըլին:
 Եւ ես վարանած այդ հայեացքին դէմ
 Կը փըռւիմ գետին հողը կը դիտեմ:
 Լալու փափագ մը կոկորդըս կու գա,
 Ու սիրտըս կըրծող կըսկիծ մը կ'ըզգա:
 Յանկարծ արցունքը կը յորդէ աչքէս,
 Լարումըս ալ թու՛նալ կ'ըսկըսի քիչ-քիչ.
 Մեղմիկ, անխռով նիրհ մը ամոքիչ
 Կու գա կը կախուի թաց թերթերունքէս.
 Եւ խնր կը նընջեմ՝ ցօղով արցունքով
 Թըռճած խոտին մէջ՝ ոչխարներուն բով:

Անուշ, դեղգեղուն ձայն մը սրինգի
 Խայթեց ահանջըս և ես արթընցա.
 Հովը երեսըս շոյեց մեղմակի՛
 Ընդոստ շարժումով ելա նըստեցա:
 Լուսինը արդէն անհետ էր եղեր.
 Ճերմակ, կապտագոյն նուրը ժապաւէններ
 Ձիգ-նեղ շերտերով փըռւեր էր երկար,
 Ուր լոյսի առջի ցոլքը կ'երերար:
 Հովիւը ելած՝ սըրինգը բերնին
 Աբօտ կը քըշէր հօտը արթընցած,

Որ կը խըլըրաէր ու կամաց կամաց
 Սուր մայիւններով կեանք կու տար օղին:
 Հեռու կը լըսէր խուլ ձայն մը կերկեր.
 Լոյսը բացւելու արդէն մօտիկ էր:

Շուտ ընկերներս ալ ցատկեցին ոտքի.
 Ամեն բան կապած պատրաստ էր արդէն.
 Արեւ չեւած իջնէինք պիտի
 Այդ թարմ ու դալար մեր սարահարթէն:
 Հապճեպ հըրաժեշտ տըւինք աղմկուն՝
 Հիւրասէր ծերին ու իրեններուն.
 Եւ վերջին անգամ երբ ես կարկամած
 Աղջըկան գէմքին նայեցա կամաց
 Մեր հայեացքները իրարու զարկին.
 Օ՛հ, ինչպէս խորն էր ու ինչպէս յուզիչ
 Իր ջերմ ահնարկը, իր ժպիտը ջինջ.
 Կարծես կը գըզէր, ու կ'ըսէր մէկին.
 «Է՛, թող. ամեն մարդ իր ճամբով, եղբայր.
 Բաժնըւինք սիրով ու յիշենք իրար:»

Ու բաժնըւեցանք. ան կեցած էր լուռ:
 Արահետը ձախ ծըռեցաւ յանկարծ.
 Վերջին նայածք մը նետեցի տըխուր
 Եւ աղջիկն աչքէս կորուսի անդարձ:
 Սուր խայթ մը ու ցաւ կ'ըզգայի ներսէս.
 Ալ կասկած չըկար սիրած էի ես:

Բայց հազիւ հըպած այդ սուրբ փորձութեան,
Թողեր կ'երթայի, անջատ յաւիտեան:
Իսկ այդ անջատման լեղի բաժակէն
Դուք ձեր կեանքին մէջ ըմպած էք երբէք.
Հեռացած էք դուք ծանր, սըրտաբեկ
Այն սիրուն, կանանչ, գողտրիկ բլրակէն,
Ուրկէ մէկը լուռ կը հետևի ձեզ
Եւ երբ ձեր սիրտը կը պայթի կարծես...

9

Է՛հ, քանի տարի անցած է հիմա
Այդ անհոգ կեանքիս երազ օրերէն.
Եւ որքան հեռու կ'ապրիմ ահամա
Իմ սըրտիս ձօտիկ չըքնաղ վայրերէն:
Բայց գիշերները նեղ սենեակիս մէջ՝
Երկար յոգնիկէս կամ ձանձրոյթէս վերջ՝
Յաճախ կ'երագեմ Գեղարդի օպան
Կը յիշեմ հատ-հատ ամեն չընչին բան.
Ու աչքերուս դէմ կը ծընի պայծառ
Լեռան աղջըկան պատկերն անարատ,
Իմ անրիծ սըրտիս յոյզերն այն առատ
Եւ վայրի սիրուս բերկրանքը անճառ...
Է՛հ, բազմազարդ վայրեր, վայրկեաններ անգին
Իմ պատանեկան անըրջոտ կեանքին...



[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page]

[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page]

« Ազգային գրադարան



NL0350945

47364

